Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՋԻՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՋԻՄ ԹՈՐՈՍԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Ուրախութիւնն ունենք հայոց հոգեւոր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը յղելու Ձեզ եւ գնահատանքի Մեր խօսքը բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր ու փառանդաշատ զաւակիդ:

Մեծարգոյ պրն Թորոսեան,

Մեծ ու գնահատելի է Ձեր վաստակը մեր ժողովրդի կեանքում: Երկարամեայ բեղուն գործունէութիւնը, որ Բարձրեալի օրհնութեամբ արդիւնաւորուած է մնայուն իրագործումներով, արժանապէս դասել է Ձեր անունը հայ ճարտարապետութեան յայտնի անունների կողքին: Հայրենի մեր Երկրում եւ նրանից դուրս բազմաթիւ են Ձեր նախագծերով կառուցուած շէնքերն ու յուշարձանները, որոնք առանձնանում են իրենց ճարտարապետական ուրոյն հորինուածքով: Ձեզ վստահուած պատասխանատու պաշտօնները, որոնց շարքում Երեւանի գլխաւոր ճարտարապետ եւ Սպիտակի վերանորոգման քաղաքաշինական խորհրդի նախագահ, ինչպէս նաեւ Ձեզ շնորհուած պետական ու միջազգային բազում մրցանակները, գիտական կոչումներն ու պարգեւները խօսուն վկայութիւններ են Ձեր յաջողութիւնների ու ձեռքբերումների:

Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մատուցած Ձեր ծառայութիւններին, որոնք արտայայտութիւնն են հոգեւոր մեր սրբօրրանի նկատմամբ Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի: Լինելով Մայր Աթոռիս Ճարտարապետական Խորհրդի անդամ, Դուք յամենայնի աջակցութիւն էք բերում Մայր Աթոռի կողմից իրականացուող շինարարական ծրագրերին՝ Ձեր մասնագիտական կարողութիւնները ի սպաս դնելով պատմական մեր վանքերի վերանորոգմանն ու նոր եկեղեցիների ու եկեղեցական շէնքերի կառուցմանը: Տարիներ առաջ Դուք համահեղինակ եղաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գլխաւոր Մուտքի եւ Բաց Խորանի նախագծի, որը ամենամեծ իրագործումներից մէկն էր Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեայ յոբելեանին նուիրուած եկեղեցաշինական ծրագրերի մէջ եւ իր գեղեցիկ տեսքով նոր շուք է հաղորդում Սուրբ Էջմիածնին:

Արդիւնաշատ է նաեւ Ձեր մանկավարժական երկարամեայ գործունէութիւնը: Աւելի քան կէս դար Դուք դասաւանդում էք Երեւանի Ճարտարապետական-շինարարական Ինստիտուտում՝ կրթօջախի սաներին փոխանցելով Ձեր բազմափորձ գիտելիքներն ու վարպետութիւնը, արուեստագէտի ճաշակը:

Մեծարգոյ պրն Թորոսեան, առ ի գնահատութիւն հայ ճարտարապետութեանն ու մշակոյթին մատուցած Ձեր ծառայութիւնների ու տարիների վաստակի, Հայրապետական այս՝ Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՄՈՒՐԲ ՄԱՀԱԿ – ՄՈՒՐԲ ՄԵՄՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ստեղծագործական ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը մեր Հայրենիքին, ժողովրդին ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինի ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 316